## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1898 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.

(Շարունակութիւն եւ վերջ) *

## ԸՍՏ ՍԱՐԳԻՍ ՆՐԷՑԻ՝ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԻ ՅՕՐԻՆԱԾ

### Զ. Աւուր.

Յտ. Հ. ա Այսաւր զենար զառն աստուծոյ.

Ու. Որ վասն մեր որդի աստուծոյ ի վերայ քառաթեւ խաչին բեւեռեցար մարմնով. ողորմեա մեզ։

Որ փոխանակ մահաբեր պտղոյն շնորհեցեր մեզ կենաց փայտ զխաչ քո՝ տէր, յոր ելեր կամաւ. ողորմեա մեզ։

Յորժամ յարեւելից փայլես զնշան խաչի քո քրիստոս փառաւք, յայնժամ լուսաւորեա սովաւ զմեզ եւ ողորմեա։

Փ. Որ զխաչ քո շնորհեցեր քրիստոս զաւազան հաստատութեան եւ ցուպ յարուցիչ [1] գլորելոյ նախաստեղծ մարդոյն. եւ եդուր հաւատացելոց ախոյեան զօր եւ զէն ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք պահպանեա սովաւ զերկրպագուս ամենասուրբ երրորդութեանդ։

Որ տիգախոց կողիւդ քո քրիստոս ի վերայ քառաթեւ խաչին [2] մեռուցեր զմահու զաւրութիւն, եւ ընդ վերին զաւրս հրեշտակաց համադասեցեր զորդիս սիոնի. աղաչեմք պահպանեա սովաւ՛։

[3] Որ կենարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. եւ անմահութիւն պարգեւեցեր մահացու բնութեանս. ի համբարձումն յարութեան մերոյ յարուցեր զպատուանդանն կենարար խաչիւն. աղաչեմք պահպանեա սովաւ՛՛։

Դտ. Ծղ. Այսաւր ցնծայ երուսաղէմ վերին ընդ յարութիւն քրիստոսի. որ յարեաւն այսաւր ի մեռելոց, եղծ զերկրաւոր մահու։

Հրաշազարդէ եկեղեցի [4] գոլով առ քեզ մեսիային եւ ի վերայ քո բազմի աստուածընկալ սուրբ. սեղանն։

Յորժամ սերոբէքն եւ քերոբէքն ոչ իշխեն մերձենալ. այսաւր տեսաք սքանչացեալ ի խորանն սրբութեան։

Դծ. Դ. գ Խորայէղեան բանակին [1] եղեր առաջնորդ [2] ի ձեռին մովսէսի [3] գաւազան, որ եհերձ զծովն կարմիր. աւրհնեալ ես դու փայտ սուրբ, սուսեր անեղին։

Իսկ [4] յերեւիլ նշան խաչի քո ի [5] յարեւելից, ուրախասցեն [6] կոծեսցին. եւ բերկրին հաւատացեալք սուրբ [7] երրորդութեանն։

[8] Խաչն փայլէ ի յարեւելից եաւթնպատիկ պայծառ քան զարեգակն. պայծառանան արդարքն եւ մեղաւորքն մերժին յանդունդ լուսոյն։

### Է. Աւուր.

Փկ. Դ. ա [1] Ի վեց աւուր երրորդի բարձր [2] ի յոյս սիմեոնի աստուածազարդ զերահրաշ

---

* Տես Արարատ 1898 թ համար Ը. եր. 374.

ա. Ծանօթ եւ վաւերական չէ։ Հարցին յաջորդող ու. եւ ճշ. գտնւում են միայն—ԺԷ 178-ա. 179-ա։ Տ գրուած է Բ կանոնի տակ իբրեւ ճշ։

1. ճշ—գլորելոյ, տ—գլորելոց.
2. ճշ—լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի եւ ընդ . .
3. ճշ—Որ կենարար անուամբն քո քրիստոս մեղուցեալ զմանուկ զօրութեամբ եւ անմահութեամբ . . .
4. խաչ—զայով.

գ. Գտնւում է—Ժ 150-ա կրճատ. ԺԶ 221-ա, 222-բ. ԼԲ 231-ա. ԽԱ 200-ա. ԽԶ 369-ա. ԾԱ 279-ա. ԾԷ 290-ա. ԿԴ 918. ԿԹ 195-բ կրճատ.

1. ԼԲ—եղեւ.
2. ԺԶ, ԼԲ, ԽԱ, ԽԶ, ԾԱ, ԾԷ—ի ձեռին.
3. ԺԶ, ԽԱ, ԽԶ. ԾԱ, ԿԴ—զաւազանն.
4. ԼԲ—երեւիլ. ԾԱ—յերեւեալ. ԾԷ—երեւեալ.
5. ԼԲ—արեւելից.
6. ԼԲ, ԾԷ—պապանձին.
7. ԺԶ—երրորդութեան.
8. Համեմատեան ըստ «Մեծ եւ անեղ» շարականի Գ տան կէսը—«Խաչն փայլի յարեւելից եօթնպատիկ պայծառ քան զարեգակն. պայծառանան արդարքն. եւ մեղաւորքն ծածկին յանդունդս լուսոյն»:

ա. Գտնւում է—Ժ 150-ա կրճատ. ԺԷ 174-ա. ԼԲ 231-բ, ԽԱ 202-բ. ԾԱ 281-ա. ԿԴ 919. ԿԹ 195-ա կրճատ.

1. ԺԷ ի վեց . . . բարձեալ ուսոյն սիմեոնի աստուածայնոյն զերահրաշ . . . (ըստ այսմ եւ ԽԲ 256-բ).
2. ԽԱ, ԾԱ, ԿԴ—ի յոյս.

և պատուական սուրբ նշան, ընդ անմարմնոց դասուցն քեզ երկրպագանեմք։

[3] Զաղամ եհեղծ ի դրախտին ճմլեալ ողկոյզն առ ի քէն. և ի հրացայտ ի կողէն լուսաւորեաց զարարածս. ընդ անմարմնոց":

[4] Որ ի յերկրի ես պարծանք և զէն հաւատացելոց ամենաւրհնեալ սուրբ նշան, որ կանգնեցար ի յերկրի յաղթող ընդդէմ թշնամեացն. ընդ անմարմնոց":

դէ. ձը.   [բ] **Խ**որհուրդ սուրբ նշանին յառաջնումն երեւեալ կենաց փայտն ի դրախտին, կեանք զքեզ մեզ յայտնեաց Քրիստոս, որ խաչեցար և զմեզ փրկեցեր։

Պայծառ քան զարեգակն պատուական [1] սուրբ նշան, կանգնեալ ի գողգոթայ ի փրկութիւն աշխարհի. Քրիստոս որ խաչեցար":

Արմատ անմահութեան որ տնկեցաւ ի դրախտին. ողկոյզն անապական որ ճմլեցաւ ի խաչին. Քրիստոս'

Մեծասքանչ և հրաշ. առ աբրահա. եղեալ. փոխա. ը. Սահա. տեսե. զխոյ. կախե ըդծառ. քս. (կրճատ):

Սանդուղք. յե. է. յ. խն. առ յակ. առ երև. մկա. և հրեշտակաց ընդ նմա ել և էջ. քս (կրճատ):

Ահեղ և նորաքանչ [2] առ նոյին երևեալ. փոխանակ խոյահակոյ տեսեալ զխոյն կախեալ [3] ընդ ծառոյն. Քրիստոս":

Ցնծացան այսաւր երկինք և երկիր, [4] զուարճանան ընդ սուրբ յաղթող նշան և ընդ փայտ փրկութեան. Քրիստոս':

Նախանձեալ [5] ընդ մեզ չարին հանելով ի դրախտէն, [6] եհաս բանն աներին ի խնդիր պատկերին. Քրիստոս":

Ահա կատարեցաւ բանն մարգարէին որ ասէ. աստուած ի հարաւոյ եկեսցէ և սուրբն ի փարան լեռնէ. Քրիստոս":

Նոյն ինքն է աստուած որ գալոցն է խաչիւ, խաչիւ կենագործել զմեռեալքս մեղաւք. Քրիստոս":

[գ] **Խ**որհուրդ սուրբ նշանին.. (բստ վերնոյն)

Պայծառ քան զարեգակն պատուական սուրբ նշան, ի գողգոթայ տեսեալ զուարճացան արարածք. Քրիստոս":

Ողկոյզն անմահութեան ճմլեցաւ ի խաչին, արբոյց մեզ ծարաւեացս զբաժակ քաղցրութեան. Քրիստոս":

Եհաս բանն աստուած ի խնդիր պատկերին, եկեալ ի գողգոթայ բևեռեալ ի խաչին. Քրիստոս":

Ահեղ և նորաքանչ առ նոյեան տապանին. խոյահակոյ տեսեալ զխոյն կախեալ զծառոյն. Քրիստոս":

Մախացեալ ընդ մեզ չարին և եհան ի դրախտէն. իջեալ տէրն ի յերկնից ազատեաց զգերեալսն. Քրիստոս":

Մեղաւ մայրն առաջին և հերեալ ի պտղոյն. իջեալ բանն աստուած ի խնդիր պատկերին Քրիստոս":

Ցնծան այսաւր երկինք և երկիրս ընդ սուրբ յաղթող նշան և ընդ փայտ փրկութեան. Քրիստոս":

Ով նշան յաղթող զքեզ ունիմք բարեխաւս առ տէրն և արարողն որ ի քեզ բևեռեալ. Քրիստոս":

Ահա կատարեցաւ բանն մարգարէին. (բստ վերնոյն):

### ՎԵՐԱՑՄԱՆ ԽԱՉԻ

«Կանոն Ութերորդ աւուրն Աւրհնութիւն»

յդ.   ա Սրբութիւն սրբոց. շնորհեցեր . . .

Հ.   **Ճ**առագայթ փառաց աստուածային

---

3. ԺԷ—Զաղամ ձեռնալ ի դրախտին, ողկոյզ ճմլեալն ի ձայնին, եւ ի հրացայտ . . . (բստ այսմ և ԽԲ 256-ն).

4. ԺԷ—չունի այս տունը, այլ—«Հովուապետն անեղ երեւման դասուորին եւ դասակարգ յարուցն ասեղի, յորում լոյսն անշիջանելի ի քեզ կառուցեալ ստեանի, ընդ անմ":

բ. Գտնւում է—Ժ 152-ա կրճատ, ԼԲ 233-ր, ԽՋ 369-ր, ԿԴ 919, ԿԹ 196-ա. Հարականիս տները չկան բոլորի մէջ կարգաւ. այլ ԽՋ ունի—Խորհուրդ. Ահեղ. Պայծառ. Նախանձեալ. Ահա կատար. Ժ և ԼԲ ունին—Խոր. Արմատ. Ահեղ. Պայծ. Նախանձեալ. Ահա. ԿԴ ունի—Խոր. Պայծ. Արմատ. Ահեղ. Ցնծան. Նախանձ. Ահա. Նոյն ինքն. ԿԹ ունի Խորհ. Արմատ. Ահեղ. Մեծասքանչ. Սանդուղք. Պայծ. Նախանձ. Ահա. Նոյն ինքն.

1. ԼԲ, ԽՋ—փայտ խաչի.

2. ԿԴ—առ նոյին.

3. ԿԴ—ի ծառոյն.

4. Ձեռ.—զուարճանոյ.   5. ԿԴ—ընդ մեր.

6. ԿԴ—իջեալ.

գ. Գտնւում է միայն ԺԷ 179-ր տարբեր ձեւով.

ա. Ծանօթ և վաւերական շարական. Վերացման խաչի Դ աւուր օրհ. կէսը. Օրհնութեանս յա-

նշանի խաչի քո՛ տէր, յերկնից փայլատակեալ. արփիափայլ հրաձեւ ցուցաւ բազմութեան ժողովոյն. որ է կարապետ քո ահաւոր գալստեանն. տէր աստուած հարցն մերոց։

Ծագումն փայլակնացայտ ի գողգոթա ցոլացեալ երեւի նշան քո՛ տէր. սա բացէ մեզ զքերոբէափակ որոյն ամրութիւնն ինքնիշխան հրամանաւ. որ է փառք տէրութեանն քո ահաւոր. տէր աստուած հարցն մերոց։

Զաւրութիւն քառաթեւ խաչի քո՛ տէր, խորտակեաց զգլուխ խարդախողին. եւ թափանցիկ լուսով պայծառացոյց զկաթողիկէ, որ է պսակ պարծանաց եկեղեցւոյ քո սրբոյ. տէր աստուած հարցն մերոց։

Գ. Բարձր արարէք զբազմեալն ի վերայ խաչին

Որ այսաւր եկեալ ի չարչարանս՝ գերազանցեալ սրբոյ խաչին ի քառակերպին. մըշտընջենաւորութ Հաւսել փառկ արեան արբուցանելով տիեզերաց. բարձր արարէք զբազմեալն ի վերայ խաչին։

Որ անճառելի աստուածային փառաւք պայծառացոյց հրակերպ փայլմամբ զնշան խաչին, հրաշագործեաց ի մեզ զաւրութիւն ճառագայթիցն, արփիահրաշ լուսով զարդարեաց զկաթողիկէ եկեղեցի. բարձր՛՛։

ա. Որ բարձող ես բարձրելոյն քառակուսի աթոռ խաչելոյն, ներկեալ արեամբ անմահ անեղին. սուրբ կենդանարար և մեզ ողորմեա։

Որ բեւեռաւք և բազկատարած բանն աստուծոյ ի քեզ միացաւ գեղարդնահոս ըխմամբ ներկեալ զքեզ արեամբ. սուրբ կենդանարար և մեզ ողորմեա։

Որ վայելուչ փառաւք կազմեցար ի ձեռն ոսկեգոյն մանուշակի առաւաւտու աստղ արուսեկի. սուրբ կենդանարար և մեզ ողորմեա։

բ. Աթոռ անեղին և սեղան լուսոյ, պայծառ արեգակն և լոյս բերկրեալ, ի սուր սրբոբէափայլ ծառ կենաց անկեալ. փառն որոյ և մեք երկրպագեմք սրբոյ նշանիդ։

Բանալի դրախտին նորոգաւղ բնութեանս, զաւազան կենաց նախնոյն ադամայ. գերազանց զասր ծառոյն սարեկայ. փառն որոյ և մեք երկրպագեմք սրբոյ նշանիդ։

Գեղեցիկ ծաղիկ յարմատոյն յեսսեա ի քեզ բարձրացեալ արեամբ ծաղկեցաւ և նորաբողբոջ ցոյց զարդարածս. փառն որոյ և մեք երկրպագեմք սրբոյ նշանիդ։

Յէ. Գ. Իսկ դու պարծանքդ պարծանաց գեղարդդ սուրբ և գերազանց, որ ձեռամբ Թադէոսի սուրբ և ընտրեալ առաքելոյն առաքեցար մեզ այսուէն՝ հիմն բարեաց հաստատութեան. քեզ զքրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ։

Թեւաւոր սուր երկսայրի և բանալի անճառ շնորհաց. զի դու բարձեր զկողն կենաց, ջուր և արիւն արտաբերեալ՝ որով մկրտիմք և հաղորդիմք ի բնակութիւն երրորդութեան. քեզ զքրիստոս բարեբանեմք՛՛։

Գեղեցիկ գոյն գովելի ներկեալ արեամբն [1]քրիստոսի, ի փառս ազգիս հայաստանեայց արձանացար յերկրի մերում. աշտարակ բարձր և ամուր պարիսպ հրեղէն շուրջանակի. քեզ զքրիստոս բարեբանեմք՛՛։

Աստուածամուխ սուսերդ սուրբ աստուածախառն զաւրութեամբ, որով կտրին արմատք ախտից և ցաւք յանցանաց. քեզ փրկեցաւք [2]ի փորձանաց և յամենայն որոգայթից. քեզ զքրիստոս բարեբանեմք՛՛։

[3]Գեղապանծոյն գեղարդն սուրբ և թարգմանիչ անմահ որդ[ւ]ոյն, որով ցուցաւ [4]մարդ և աստուած ստոյգ մեռեալ և կենդանի. յոր հաւատաց հարիւրապետն և վկայեաց աստուածութեանն. քեզ զքրիստոս բարեբանեմք հիմն բարեաց եկեղեցւոյ։

Աստուածաներկ սուր փայլածու նիզակ ի ձեռին յիսուսի, որով փախչին փաղանգ դիւաց և բնակին գունդք հրեշտակաց. քեզ

---

Հորդող Ե. ս ա. մի. գտնւում են միայն Ժ-Է 180-ա 182-ա։

ր. Մանկունքս 1842 թուին առաջին անգամ տպագրեց Մ. Աթոռիս միաբան Յով. եպ. Շահխաթունեան (տես «Ստոր. կաթ. էջ.» հտր. Ա. 48.), և ապա Հայր Ալիշան (տես «Այրարատ» 348. ծանօթ. 1.), առնելով Շահխաթունեանի օրինակից. Տպագրածի մէջ կան մի քանի բառերի աննըշան փոփոխութիւններ, որ և նշանակում ենք.

1. Տպ.—յիսուսի. 2. Տպ.—ի փորձութեանց:

3. Ձեռ. Նախ «Աստուածամուխ» (վերջին տունը) և ապա «Գեղապանծոյն».

4 Տպ.— Աստուած եւ մարդ.

կնքեսցուք զզա[յ]արանս և զրոշմեսցուք զմիտս և զհոգիս՝ տալով պատիւ երրորդութեանն հաւր և որդ[ւ]ոյ և սուրբ հոգ[ւ]ոյն, կենդանութեան և յետ մահու և յանսպառ յաւիտենից:

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ.

Յգ. Հբ. [ա] Ցնծացէք այսաւր ազգ և ազինք ամենայն ի յիշատակի սուրբ վարդապետացն, որք պայծառացան լուսովն երկնային:

Ցնծացեալ բերկրեցան ի փառս որդւոյն աստուծոյ, եղեն զաւրաւորք ի պատերազմի, զիշխանն անաւրէն ի միջոյ բարձին:

Անմարմնացեալք ի մարմնի հրեշտակակրաւն առաքինութեամբ զարդարեցին փառաւք սուրբ զեկեղեցի և եղեն քարոզք որդւոյն աստուծոյ:

## ՇԱՐԱԿԱՆՔ

## ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶՕՐԱՎԱՐԻ.

Գլ. [ա] Հզաւր արքա[յ]ին զաւրեղ զինակիր՝ որք յուսով կարգան, արագաժաման յայտնի աւգնական համազգի մարդկան. ի քէն բելիար և զաւրք իւր դողան, ընտրեալ և գովեալ սարգիս զաւրական, մարտիրոս որդ[ւ]ով քո[յ]ին սիրական. աղաչեմք զքեզ լեր մեզ աւգնական:

Ծառս ճշմարիտ և յարանման, յերևեալս ի պարս խորին խորասան, վայելուչ վայրին ի մազանդարան, ի մուտ ի քաղաքն որ կոչի համդան, [1] ի գաշտ ծաղկածին՝ զոր յիշէ վարդան, ի յամուրն անտառ քրդաքանուան, անդ ուր զմարտիրոս արկին ի կապան. աղաչեմք զքեզ լեր մեզ աւգնական:

Բարձրագոյն գահուն ի թագաւորական ընտրեալ և գովեալ սարգիս զաւրական. որ [2]պարտեր զմարտ պատրող գիւական, այրեցեր զբաղին կռոցն պաշտաման, [3]շարժեր Շապուհոյ ցաւ հոգ[ւ]ոյ մահուան, ով սուրբ զաւրական և սիրական. աղաչեմք զքեզ լեր մեզ աւգնական:

Ով սուրբ վարդապետ ընտիր և արժան մեսրոպ բազմաջան և հայոց թարգմանն. որ զնշանագիրն քո յայտնեցան, և պսակաւութիւն հայոցս լցան, ըստ այնմ աւրինակին կանգնեցեր նշան ի մէջ մացառոյ և ի խուժադուժն, բարձր ի գիտակի Գագա գագաթան, որով պահպանի քառանկիւն սահման, և փայլէ լուսով մեծ արեգական, շահաւէտ շարժումն շրթունք ի բերան, անունն սարսելի սարգիս զաւրական, մարտիրոս որդւոյդ քո[յ]ին սիրական. աղաչեմք զքեզ լեր մեզ աւգնական:

Դէ. Հա. [ա] [1]Երկնաւոր զաւրացն աւրհնեալ աստուած հարցն գովեալ. այսաւր [2]յերկրէ ընտրեալ զինուոր [3]զսուրբն սարգիս պսակաւոր. զքեզ բարեբանեմք աստուած հարցն մերոց:

Որ [4]անդրանիկ արարածոց և նախկին արդար հոգւոց, [5]այսաւր ցուցեր արդեամբ յերկրի զսուրբ զաւրականն ցանկալի. զքեզ բարեբանեմք":

[6]Հուրբ առաքեալ ի վերնատունն հոգիդ հզաւր և [7]մեծատուն. այսաւր լցեր քոյին շնորհաւք զսուրբն սարգիս առատ փառաւք. զքեզ բարեբանեմք":

Գ Ձայն: Ընդ զաւրավարին զաւրք [8]երկ-

---

ա. Գտնւում է—ԺԷ 193-ա:

ա. Գտնւում է—ԺԷ 47-բ: Շարականիս գրիչ Սարգիս երէցը թէև շարականս ընծայում է Արևելցի մեծն Վարդան վարդապետին, բայց թերևս սրա հեղինակն է Յովհաննու Արքայեղբօր աշակերտ Բարձրբերդցի Վարդան վարդապետ, ինչպէս և յայտնել ենք մեր յօդուածում:

1. Վարդանի գրած «Ամենասուրբ երրորդութեան» շարականի մէջ «ի դաշտ ծաղկածին»:

2. Ձեռ.—պարսեր.

3. Ձեռ.—շարժեր շապուհո.

ա. Հարցս և սրան յաջորդող ո, ց գտնւում են—ԻԳ 58-բ. ԼԵ 267-ա. ԻԹ 302-բ. ԽԱ 50-ա. ԽԲ 56-ա. ԿԴ 90. ԿԷ 44-բ. ՀԴ 40-ա.

1. ԻԳ, ԻԴ, ՀԴ երկնաւոր.

2. ԻԹ, ԽԱ—յերկրի.

3. ԻԳ, ԻԹ, ԿԷ—սուրբն.

4. ԻԴ, ՀԴ—անդրանիկն.

5. ԻԴ, ԿԴ—այսօր ... արդեամբ. ԽԱ, ԽԲ—այսօր յերկրէ (ԽԱ—յերկրի) ընտրեալ զինուոր սուրբ ... ԻԹ—այսօր ցուցեր ... սուրբ զօրավարն. ԿԴ—այսօր ցուցեր ... սուրբ զօրականն:

6. ԻԴ, ՀԴ—սուրբ. ԻԴ ԽԱ, ԽԲ—Հզօր ... ի վերնատունն.

7. ԻԹ—փառաւոր.

8. ԻԴ, ԻԹ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ՀԴ—երկնային եւ երկրային.

նոյինք և երկրայինք բարձր արարէք զնա յա-
ւիտեանս։

Այսօր [9] զինուորք սուրբ զուարթականն սպասաւորեալք [10] արիութեամբ Հոգւոյն՝ [11] ըղ-բարձրացուցիչն ծնողին և [12] ծնելոյն սրբոյն սարգսի մարտիրոսի՝ բարձր արարէք զՀայրն երկնաւոր։

[13] Նորոյս սիրով շինուածք լուսածին՝ [14] խաչիւ խաչեալ ընդ խաչելոյն և խաչակցեալ սրբոյն սարգսի և մարտիրոսի նորին որդւոյ՝ [15] զ՚ի խաչ կոչեալ զզօրքին միածին բարձր արարէք [16] զլոյսն անստուեր։

Նեցուկ լերուք ի վշտաց անօրինաց՝ սուրբ [17] զՀոգին ազատութեան՝ որ զանգործութիւն [18] շնորհեաց ի ձեռն որդւոց ազատաց՝ բարեբանեցէք ի ձայն [19] գոհութեան՝ բարձր արարէք [20] զբաշխողն շնորհաց։

բ. Ի սուրբ տաճար Հոգևոր [1] յեկեղեցիս բանաւոր՝ ով սուրբ սարգիս զօրականն՝ զքեզ տէր կանգնեաց մահարձան. աղաչեա զաստուած [2] սրբել զմեզ ի մեղաց։

Սիրով Հոգւոյն պարուրեալ մեծ [3] փառաւոր զօրավարս [4] պտուղ կենաց բաշխելով անճառ Հրաշիցն ձեռով. աղաչեա՛"։

[5] Սուրբ անդրանիկ քո [6] որդւով՝ զոր ծնար Հոգւով և մարմնով՝ մարտիրոս անուանեալ [7] գործով [8] զանուն կատարեալ՝ աղաչեա՛"։

Ի զամբաց ցոլացեալ ի խաւարատան լոյս ծագեալ՝ անդ [9] քաջութիւնս ցուցեալ և զյաղթութեան պսակն [10] առեալ. զմեզ առէք պսակակիցս՝ որ [11] եմք տօնիս Հանդիսակից։

Աստուածային սքանչելեօք՝ և [12] Հաւատով սուրբ փառօք՝ Ձեռընթաց արշաւմամբ [13] եկէք յերկինս կոչմամբ սուրբ սարգիս և մարտիրոս՝ աղաչեցէք միշտ զՔրիստոս։

[14] Ռամկաց բազմաց նեղելոց այլև կրկին գերելոց առնուաՀաս [15] ազատութեամբ արագ փրկէք [16] այցելութեամբ. [17] աղաչեցէք զաստուած զմեզ ազատել ի վշտաց։

գ. Սրբոց գնդից երկնից զուարթ Հաղորդ [1] եղէք Հրեշտակաց՝ [2] սուրբդ սարգիս և մարտիրոս զմեզ յիշեցէք առ Քրիստոս։

Որպէս և Հայրն [3] Հաւատոյ [4] մեծն արբաՀամ զօգ Հոգւոց զիսաՀակ պատարագեալ և [5] զուրՀնութիւնն [6] ընկալեալ։

Իւթեղէն [7] մարմնով ծննդեան Հանդի-

---

9. ԻԳ, ԽԱ, ԽԲ—զինուոր. ԻԲ—զինուորք Հոգւոր .. ԿԴ—զինուորք սուրբ ... սպասաւորեալ.
10. ԿԴ—քահանայութեամբ. ԻԴ—յարութեամբ. ԻԳ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ԿԷ, ՀԴ—արութեամբ. ԻԳ, ԻԴ ԽԱ, ԽԲ, ԿԷ—արութեամբ .. Հոգւոյն. ԻԹ—Հոգւոյ.
11. ԻԳ, ԿԷ—զբարձրացուցիչ ... ԻԹ—բարձրացուցիչն .. ԽԱ, ԽԲ, ԿԴ—բարձրացուցէք զբարձրացուցիչ.
12. ԻԳ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ԿԷ—ծնեցելոյն.
13. ԻԳ, ԻԴ, ԽԲ, ԿԴ, ԿԷ, ՀԴ—նորոյ. ԻԹ, ԽԱ—նորոյս ... շինուած. ԻԳ, ԽԱ, ԽԲ—նորոյս ... լուսածին։
14. ԻԹ—խաչին ընդ խաչելոյն խաչակցեալ .. ԻԴ, ԻԹ, ԽԱ, ԽԲ, ՀԴ—խաչ ... որդւոյն. ԿԴ—մարտիրոսին .. որդւոյն .. ԻԴ—մարտիրոսին որդւոյն։
15. ԽԹ—զովեցէք զորդին ...
16. ԻԴ, ՀԴ—զլոյսն ի Հօրէ. ԽԹ—զլոյսն վերին.
17. ԻԴ, ԻԹ—Հոգին.
18. ԻԴ, ԻԹ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ՀԴ—շնորհէ. ԿԴ—շնորհէ ... ազատութեանց.
19. ԻԴ, ՀԴ—ցնծութեան.
20. ԻԳ, ԻԴ, ԿԴ, ԿԷ, ՀԴ—զՀոգին ճշմարիտ.
1. ԿԴ, չունի—յեկեղեցիս բանաւոր.
2. ԻԴ, ԿԷ—մաքրել. ԿԴ—զմեզ ազատել ...
3. ԻԹ—բանաւոր.
4. ԿԴ, ԿԷ, ՀԴ—զպտուղ. ԽԱ, ԽԱ—պտուղ .. շնորհելով

5. ԿԴ, չունի այս տունս.
6. ԻԴ, ԻԹ, ՀԴ—որդւովդ.
7. ԽԱ—գործովք.
8. ՀԴ—զանուն յցեալ. ԻԴ, ԽԲ—զանունն .. ԻԴ. ԿԷ—զանունն .. սուրբ սարգիս (ԿԷ—եւ մարտիրոս) աղաչեցէք միշտ զՔրիստոս. ԽԱ—զանուն յցեր. աղաչեցէք.
9 ԻԴ.—զքաջութիւնն անցոյց. ԿԷ—զքաջութիւնն անդ ցուցեալ.
10. ԽԱ—առեալ սուրբ.
11. ԻԹ—եք.
12. ԻԴ, ԻԹ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ԿԷ—Հաւատոյ.
13. ԽԲ—եկեալ. ԿԴ—յեկէք.
14. ԽԱ, ԽԲ—ռամից բազմաց եղելոց. ԿԴ—ռամից բազմից.
15. ԻԹ, ԽԱ, ԽԲ—օգնութիւն
16 ԻԹ—այցելութիւն ԽԱ, ԽԲ—այցելութեան.
17. ԻԴ, ԽԱ, ԽԲ, ԿԷ—ապա ի մեղաց. ԻԹ ԿԴ—ապա . սրբել ..։
1. ԻԴ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ՀԴ—եղեալ.
2 ԽԲ—սուրբն.
3. ԻԴ, ԻԹ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ԿԷ—Հաւատոյ.
4. ԻԹ—մեծն.
5. ԻԴ, ԿԴ, ՀԲ—զօրհնութիւնն.
6. ԻԴ, ԿԷ—ընկալաւ.
7. ԽԱ, ԽԲ—մարմնոյ. ԻԴ, ԿԷ—մարմնոյ. ԿԴ—մարմնոյ ծննդեամբ.

տացար ի յատեանն, փոխան [8] խոյլի դառն [9] կախեալ [10] զբարձող մեղացն անեալ։

Բաժնեալ վիճակ [11] պարգեւեցան ընդ [12] յեսուայ [13] որդւոյ նաւեան զաւրավարեալ [14] յերկրէ յերկինս մեղու [15] բղխաւղ և կաթին։

Ցիւրուց եղէք ծանաւթ ազգաց լինել [16] աւտար հայրենեաց, յաղթող [17] անուանք և սքանչելեաւք, [18] փայլէք յաշխարհ միշտ փառաւք։

Նուագ [19] ձայնի փառաւորութեան՝ ի ձեր խնծոյս [20] խրախութեան, համաձայնեալ զաւրաց [21] վերին՝ երգեմք զփառս [22] ի բարձունս։

Փխ. Դ. [բ] Սուրբդ սրբոց սուրբ երրորդութիւն, որ [1] ի սրբէից [2] սրբասաց ձայնիւ միշտ փառաբանիս, ընկալ ի մէնջ [3] զաւրհնութիւնս ի յիշատակի յաղթող [4] վկայիցս. մաղթանաւք սոցա խնայեա ի մեզ։

Արարիչ հրեղինաց և հողեղինաց անըսկիզբն հայր. որ ընտրեցեր ի մարդկանէ նախ քան զլինելն աշխարհի զդասս վկայիցն լինել սուրբս և անբիծս և արի խոստովանողս անմահ արքայիդ. մաղ":

Բանից բոլորից մասանց եղելոց եղանող որդի աստուծոյ, որ յաղթեցեր աշխարհի մեղաց և մահու մարդկային բնութեամբ. և ետուր զաւրութիւն հաւատով կոխել զբանսարկուն և զերկիւղ մահու. մաղ":

8. ԻԹ—խոյլի. մնացեալքն—խոյլն.
9. ԿԴ—կախեալ. մնացեալքն—ընկալեալ.
10. ԻԴ. ԻԴ, ԽԱ, ԽԲ, ԿԴ, ԿԷ, ՀԴ—զմեղաց բարձողն տեսեալ։
11. ԻԴ, ԿԷ—պարգեւեալն. ԻԴ, ԻԹ, ԿԴ, ՀԴ—պարգեւեալն.
12. ԿԴ—Եսուայ.
13. ԻԴ—որ. ԿԷ—որդւոյն.
14. ԿԴ, չունի—յերկրէ.
15. ԻԴ—բղխեալ. ԿԷ—բղխեալ ի կաթին.
16. ԿԴ ժառանգորդ.
17. ԽԱ, ԽԲ—անուան.
18. ԽԲ—փայլեն. ԿԴ—փայլէ.
19. ԻԴ, ՀԴ—ձայնի. մնացեալքն—ձայնիւ.
20. ԻԴ—ուրախութեան.
21. ԽԱ, ԽԲ—երկնից.
22. ԻԴ, ՀԴ—ի յերկինս.

բ. Գտանւում է ԻԹ 304-ր մի տուն միայն ԽԸ 233-ա։
1. ԻԹ—սրբեկից. 2. ԽԸ—երեխարբեան ձայնիւ.
3. ԽԸ—զօրհնաբանութիւնս.
4. ԻԹ—վկայից.

Փառաւորդ վերստին ի ջրոյ զմարդիկ ծնանիս հոգի աստուծոյ, որ զփառակիցն քո զաւրացուցեր զվկայսն ի մարտի յաղթել թշնամւոյն, և արիաբար հեղուլ զարիւնս իւրեանց ընդ արեան զմեզ փրկողին. մաղ":

Ի հանդէս մարտի ձեր սուրբդ սարգիս զուարճանան զուարթունք երկնից, և պարեն ընդ մեզ տաւնելով զաւր յիշատակի ձեր քաջ նահատակք. զի մարմնով անմարմին եղէք գերագոյն ձեր չարչարանաւք. մաղթեա փրկել զմեզ ի մեղաց մերոց

Սիրով վառեալ յիսուսի վկայ նմին մարտիրոս բաղձալի մանուկ, որ զերկրաւորս արհամարհեցեր [4] մեծութեան երկնաւորին յանկացար փառաց, և պսակեցար յերկնաւոր թագաւորէն, զոր քաջութեամբ խոստովանեցար. մաղթեա փրկել զմեզ ի մեղաց։

Դխ. Դ. [ա] Յեղեմական անկոյն [1] շառաւիղ բարի պարգեւեցար մեզ սուրբդ սարգիս. ապաւէն [2] յուսոյ կենաց փրկութեան աշխ. բարեխաւս [3] լեր առ տէր վասն անձանց մերոց։

Որ զերահրաշ սիրով [4] նահատակեցար պատկեր [5] տիրականին, պատարագ անուշահոտ ընծայ բանաւոր, բարեխաւս լեր առ տէր":

Վարդագոյն արեամբ պսակեալ փառաւք [6] ամենազաւրդ մարտիրոս սիոնի սրբոյ սոփեհուռ [7] պսակ. բարեխաւս լեր առ տէր":

Անմահ արքային տաճար [8] մաքրափայլ արեգակնակերպ ճառագայթիւք. զամբար հոգւոյ բանաւորաց [9] մեծդ ի զինաւորս. բարեխաւս լեր առ տէր":

Նարդոս անուշահոտ, ծաղիկ [10] վարդա-

4. Ձեռ.—մեծութեան.

ա. Գտանւում է—Ժ 39-ա կրճատ. ԺԷ 47-ա. ԻԴ 60-ա. ԼԹ 358-բ 2 տուն. ԽԱ 15-բ. ԽԲ 58-ա. ԿԴ 905. ԿԷ 46-բ. ԿԹ 50-ա կրճատ.
1. ԺԷ—շառաւիղ.
2. ԿԴ—յուսացելոց.
3. ԿԴ—լերուք.
4. ԽԱ, ԽԲ—նահատակեալ.
5. ԿԴ—տիրագիր.
6. ԺԷ ամենազոյն սուրբ վկայ մարտի..
7. ԼԹ, ԽԲ—պսակդ.
8. ԽԱ, ԽԲ—լուսափայլ.
9. ԺԷ—սուրբ վկայ սարգիս բարե..
10. ԻԴ—վարդագոյն.

զեզ՝ ողկոյզ փափաքանաւ. [11]բուրվառ ոսկեղէն լցեալ խնկաւք՝ մատուցաք վկայ. բարեխօսս լեր առ տէր":

Լուսոյն բանին զինուորեալ քաջնիւք սուրբ զաւրացեալ և [12]մեծ նահատակ, համախմբող զաւրաց հրեշտակաց. բարեխօսս լեր առ տէր":

Սուրբ սրբոց [13]եբրեակ միութեան, զմեզ մաքրեա քեզ [14]ի բնակութիւն, լինել ընդ մեզ մինչ ի կատարած բարեխօսութեամբ և աղաւթիւք սուրբ [15]զաւրավարին։ [16]

Փէ· Ձւ· Գ Ի յարմարաց հոյց ընտրեալ սուրբդ սարգիս և մարտիրոս. մեզ [1]ծաղկեցայք զաւազան հոգւոյ, բաղբաջեալ պարտաւոր ամօթեամբ ի դաշտն ծաղկեաց և արձակեալ պտուղ ի գլուխս Գայա. բարեխօսեցէք առ տէր [2]փառն անձանց մերոց։

Սանկալի աղութեց զինուք մենամարտեալ ընդդէմ չարին հաւատոյ կռոնիւք. որով պարտեցէք զչխանն սատրին և ընդ նմին զվիշապն տաճկին. բարեխօսեցէք":

Եկեղեցեաց ուղղափառաց համախմբեալ այսաւր տաւնեմք զյիշատակ փեհից ճգնողաց. և աղաչեմք զաւշիմաղ յուշի հրաշագործել նշանս ի խաչ և յեկեղեցի. բարեխօսեցէք":

«ՍԲ. ՀԱՒՐՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ ԳԱՌՆԵՑՈՑ.

ա· Յիսուսիածին քաղցր և գթած, անախտալ յամենայնի, աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս, և խնայեա փրկել ի գեհեննոյն յաւիտենից։

Ողորմելի և եղկելի կենաւք կացի ի յաշխարհի. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Վիրաւք լցայ և խոցեցայ նետիւք չարին մեղսաւորին. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Արդարադատ և ճշմարիտ, մի՛ համարեսցես ըստ գործոց իմոց. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Ներմամբ նայեա և ողորմեա հոգւոյ իմոյ աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Նախատեսակ և արտագէտ մի՛ մերժեսցես զիս ի ձեռաց. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Երեսցս զերեսս քո ի ծառայս և ցոյց ի յիս զողորմութիւն. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Սուրբ սրբարար և մեծ [1]զաւրութիւն սրբել մաքրեա զիս ի մեղաց. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Գա՛ւ որ եկիր, և գտաք հրեղէնք յորդեալ խաղան քո առաջի. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Աւհեղ հնչիւնք, [2]ձայնք չեփորաց փողին ի լուր արարածոց. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Ռազմն [3]կազմէն զասք անմահից [4]ի վայր հանել ահի մեծաւ. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Նստիս յաթոռ դատողական ի լոյս ածես զգաղտնիս մարդկան. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Երկինք երկնից և խորք խորոց խուսափեսցին յահէ քումմէ աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Ցնծան արդարքն և զարդարին անճառ լուսով յառնենն ի փառս. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Ի քեզ [5]յուսամ տէր տէր յիսուս, յայնժամ շնորհեա ինձ թողութիւն. աղաչեմ ողորմեա անձին բազմամեղիս":

Ս. Վ. Ա.

11. ԽԱ, չուէնի—բուրվ... խնկով. ԽԲ, ԿԳ — խնկով.

12. Ժ ԺԷ, ԻԳ, ԿԳ, ԿԷ, ԿԹ—մեծ վկայ սարգիս.

13. ԺԷ—եբրորդութիւն.

14. ԺԷ—բնակութիւն.

15. ԿԳ—զօրավարաց.

16. Ժ, ԻԳ, ԼԹ, ԽԲ, ԿԷ ԿԹ — ունին և այս տաւնը —մ՚ մաղթողական (ԻԳ — ի մաճառական, ԿԷ — ի մաճառողական) յաղագս սուրբ նահատակին, ձայնիւ ղեկարայս ծաղկին, այրիր անմահութեան ի մեզ բղխեցեր եւ մաճեցեր զմեզ ի մեղաց մերոց:

գ. Գտնուամ է—ԻԳ 268-ա, ԻԹ 304-բ մի տուն և մի տող. ՀԳ 41-բ.

1. ԻԹ—ծաղկեցաք. 2. ԻԹ—փառն մեր.

ա. Գտնուամ է միայն—ԺԷ 93-ա և գրուած է Շնորհալու «Ա՛ծ անեղ-ից առաջ»

1. Ձեռ.—զաւրութիւն. 2. Ձեռ.—ձայնիս.
3. » —կազմէ. 4. » —ի վար.
5. » —յուսամ: